


10
12081

Յովհ. Կրաքացեան.

ԱՅՏԵՆԻ ԼԶՈՒ



Բ

ՏԱՐԻ

ՍԼԵՐՍԱԳԵԴԴՄՈԼ

ՅՈ

ԿՈՊԵԿ

ՅՈՒՆ. ԱՐԱՐԱՆՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Պատկերներով և քերականական վարժություններով զրուար
աշխատությունների համար

*Одобрена Попечительским Советом Кавказскаго
Учебнаго Округа для употребленія въ начальныхъ учи-
лищахъ.*

*Допущена Учебнымъ Комитетомъ при Собственной
Его Императорскаго Величества Канцеляріи по учрежде-
ніямъ Императрицы Маріи въ качествъ учебнаго руковод-
ства въ тѣхъ учебныхъ заведеніяхъ Вѣдомства, гдѣ препода-
ется армянскій языкъ (20 марта 1912 г. № 7737).*

ՊԵՐԵՐՈՂ ՏՈՒՄՈՒՐԻՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎ

Տպարան Ա. Մ. Մալխասեանցի

ԳՐԱԴ. ՅՈ 40914



ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏՅՐԻ

Վեր կաց

Վեր կաց, մանուկ, խորունկ քնից,
Արևն արդեն ծագել է.


Վեր կաց փափուկ քո անկողնից,
Հաւը վաղուց խօսել է:

Վեր կաց, նայիր պատուհանից
Դէպի հեռու՝ մեր դաշտեր,
Տես, թէ ինչպէս մեղմ գեփիւղից
Օրօրում են լիք հասկեր:

Վեր կաց, գառնուկ, սիրուն հրեշտակ,
Աղօթք արա՛ մի բերան.
Առ զրբերով լի պայուսակ,
Գնա՛ զւարթ վարժարան:

Դէ՛հ, շուտ վեր կաց, էլ մի քնիր
Ծոյլ ու անհոգ՝ անկողնում.
Առ զրբերդ, առաջ դիմիր,
Որ բազմ գտնես դու կեանքում:

Հովհաննէս Բաղդատի.



Ծոյ աշակերտը

յսօր չեմ ուզում դասի գնալ. լաւ է՝
գնամ խաղալու, — վճռեց մի փոքրիկ մա-
նուկ և վազեց դէպի դաշտ:

Բայց շուտով նա մենակ ձանձրացաւ:

Չորս կողմը նայեց և տեսաւ, որ մեղուն թռչկոտում
է ծաղկից ծաղիկ:

— Մեղո՛ւ, մեղո՛ւ, — կանչեց մանուկը, — արի, մի քիչ
խաղանք:

— Չէ, — պատասխանեց մեղուն. — ես քեզ նման ծոյլ
չեմ, որ գործս թողած, խաղն սկսեմ. խաղն մենակ:

Դրանից յետոյ մանուկը տեսաւ մի փոքրիկ թռչուն,
որ կտուցով խոտ էր կրում իր բունը:

— Սիրո՛ւն թռչնակ, — ասաց նրան երեխան. — մի քիչ
չխաղանք:

— Ի՞նչ ես ասում, ծոյլ տղայ, — բարկացաւ թռչնակը.
— ես ժամանակ ունիմ խաղալու. ես դեռ պէտք է մօեղ-
ներ որսամ՝ ձագերիս կերակրեմ, բուրդ, փետուր հաւա-
քեմ՝ բունս փափկացնեմ:

Մանուկը մտածմունքի մէջ ընկաւ: Մտածեց, մտա-
ծեց և վազեց դպրոց:

Ի՞նչ մտածեց մանուկը:

Գ ի ռ

Կարգն, այ իմ խելօք մանուկ,

Կարգն, գրիր դու ամեն օր.

Գիր կարգողի խելքն է կտրուկ,

Միտքը — պայծառ ու լուսաւոր:

Գիր կարգալով՝ դու աշխարհիս
կրճանաչես շարն ու բարին,
Ո՛վ է խնդում, ո՛վ է լալիս,
Ո՛վ է զրկում խեղճ թշւառին:

Դու կիմանաս, ինչո՛ւ մարդիկ
Պէտք է ապրեն իրար համար.
Ի՛նչ է մարդկանց ցաւն ու կարիք,
Ի՛նչ է լոյսը, ի՛նչ է խաւար:

Կարգն, դու իմ խելօք մանուկ,
Կարգն, գրիր դու ամեն օր.
Գիր կարգողի խելքն է կտրուկ,
Միտքը — պայծառ ու լուսաւոր:



Ջանասեր մանուկը

Ա.

Ջանասեր մանուկը՝ լուսամուտի առաջ նստած՝ իր
դասերն էր սովորում, իսկ փայլուն արեւը նրան դուրս էր
հրաւիրում, ասելով.

— Սիրո՛ւն երեխայ, բաւական չէ՞ կարգաս, դուրս ա-
րի, մի քիչ խաղա:

— Ո՛չ, պայծառ արեւ, ես դեռ չեմ կարող խաղալ,
պէտք է դասերս պատրաստեմ:

Բ.

Մանուկը կարգում ու գրում էր. յանկարծ մի փոքրիկ թռչնակ թրթռալով եկաւ, լուսամուտի առաջ նստեց և ծիծաղելով ասաց.

—Սիրո՛ւն երեխայ, հերիք է, որքան գրեցիր, դուրս արի, խաղա՛, ուրախացիր:

—Ո՛հ, սիրո՛ւն թռչնակ,—պատասխանեց մանուկը,—ես դեռ չեմ կարող խաղալ, պէտք է դասերս լաւ պատրաստեմ:

Գ.

Մանուկը շարունակում էր գրել ու կարգալ, իսկ պարտիզի միջից կարմիր կեռասք կարծես ասում էր նրան.

—Սիրո՛ւն մանկիկ, բաւական չէ՞ աշխատես, դուրս արի, հասած պտուղներս կեր, կշտացիր:

Իսկ մանուկը մտածում է. «Ի՞նչ ախորժակով կեռաս ուտեմ, քանի որ դասերս դեռ չեմ սովորել»:

Դ.

Մանուկը գործը վերջացրեց, գրքերը հաւաքեց, ուրախ-ուրախ դուրս վազեց և համարձակ կանչեց.

—Այն ո՞վ էր ինձ հրաւիրում. եկէք, ես պատրաստ եմ:

Այժմ արեւը նրա համար աւելի պայծառ էր փայլում, թռչնակն աւելի քաղցր էր երգում, իսկ կեռասը նրան անչափ համեղ էր թւում:

Ինչո՞ւ:

Ժրաջան տղայ

Տղան սիրում է ձեզ շատ, արեգակ,
Դաշտ ու պարտիզում ճուրղող թռչնակ,
Ճիւղերից կախ-կախ պտուղներ հասուն,
Բայց ձեզնից աւել պիտ սիրէ ուտում:

Ուրեմն թողէք, նա դպրոց երթայ,
Ընկերների հետ դասերը նա տայ.
Եւ երբ որ իր սուրբ պարտքը կատարէ,
Որքան որ ուզէ, թող նա ձեզ սիրէ:

Այնուհետև ցոլա՛, պայծառ արեգակ,
Այնուհետև երգէ՛ դու, նաշխուն թռչնակ,
Եւ անուշ համը հասուն պտուղին
Թող լինի վարձը ժրաջան տղին:
Ինչ պարտք ունի կատարելու ժրաջան տղան:

ԳՐԱԴԱՐԱՆ ՎԱՐՇՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Գրեցէք բոլոր այն առարկաների անունները, որոնք դուք տեսնում եք դասարանի մէջ: Իւրաքանչիւր բառից յետոյ վերջակէտ դրէք: Սկիզբը և վերջակէտից յետոյ գլխատառ գրեցէք:

Օրինակ.—Սեղան: Աթոռ: Գիրք...

2. Արտագրեցէք «Ժրաջան տղայ» ոտանաւորից բոլոր շնչաւոր առարկաների անուններն իրանց սկզբնական ձևով:

Օրինակ.—Տղայ, թռչնակ...

3. Արտագրեցէք «Ջանասէր մանուկը» յօդաւորից բոլոր անշունչ առարկաների անուններն իրանց սկզբնական ձևով:

Օրինակ.—Լուսամուտ: Դաս: Արեւ...

4. Գրեցէք առանձին-առանձին շնչաւոր և անշունչ առարկաների անունները:

Թռչուն: Բու: Բալ: Թաշկինակ: Բար: Կատու: Չի: Բադ: Թել: Կով: Գիւղ: Գայլ: Ըման: Թուղթ: Կռունկ: Հաւ: Սեղան: Շուն: Գիրք: Բանալի: Պատուհան: Սենեակ: Գետ: Աշակերտ: Աթոռ: Կարաս: Մատ: Գլուխ: Գիւղացի: Բաղաքացի:

Եղբայրները

Գիւղացին եօթը որդի ունէր: Հայրը միշտ պատւիրում էր նրանց, որ հաշտ ապրեն միմիանց հետ, բայց եղբայրները չէին կատարում հօր պատւերը և իրանց օրը կուռով էին անցկացնում:

Մի անգամ էլ հայրը հրամայեց մի ցախաւել բերել և ասաց որդոցը.

— Ձեզանից ով որ կտորէ այս ցախաւելը, հարիւր մանէթ կըստանայ ինձանից:

Եղբայրները շատ չարչարուեցին, բայց չկարողացան կտորել:

Այն ժամանակ հայրը քանդեց ցախաւելի կապերը և բոլոր ձիւղտները շոկ-շոկ կտորատեց:

— Տեսէք, — ասաց նա որդոցը. — Թող այս ցախաւելը ձեզ օրինակ լինի. եթէ դուք հաշտ ապրէք, ձեզ ոչ ոք չի կարողանայ յաղթել. իսկ եթէ իրար հետ կռւէք և միմեանց հակառակ լինիք, ձեզ ամեն մարդ էլ հեշտութեամբ շոկ-շոկ կըռնչնացնէ:

Ի՞նչ վնասներ կարող է հասցնել անմիաբանութիւնը:

Որբի պահանջը

Որբ եմ անտուն, անպաշտպան,
Տւէք, խնդրեմ, ապաստան,
Տւէք սնունդ և ուսում,
Ես մարդ դառնալ եմ ուզում:

Ձեմ ցանկանում շրջել դուր,
Անգործ ընկնել դռնէ-դուռ,
Ձրի մուրալ ու ապրել,
Ողորմութեան սովորել:

Առէք ձեզ մօտ որդեգիր,
Տւէք ձեռքս արհեստ, գիր,
Լինիմ խելօք ու ազնիւ,
Վայելեմ միշտ սէր, պատիւ:

Ո՞վ պէտք է որբի այդ պահանջները կատարէ:

Վատ ընկեր

Հայրը տեսաւ, որ իր որդին վատ ընկերների հետ է ման գալիս:

— Չաւակս, — ասաց նրան, — հեռու կաց դրանցից, դրանք քեզ կըփչացնեն:

— Ո՛հ, հայրիկ, — պատասխանեց մանուկը. — ճիշտ է, իմ ընկերները վատ են, բայց ես կաշխատեմ նրանց ուղղել:

Հայրը վեր առաւ մի կողով, որտեղ մի քանի փչացած խնձորներ կախն և նրանց մէջ մի գեղեցիկ կարմիր խնձոր և մի մաքուր քար դնելով, ասաց որդուն.

— Թող սրանք մնան ալստեղ, տեսնենք՝ ինչ կըլինի:

Երեք օրից լետոյ հայրը որդուն բերեց կողովի մօտ: Նայեցին և ի՞նչ տեսան. Գեղեցիկ, կարմիր խնձորն էլ արդէն սկսել էր նեխւել, փչանալ, իսկ քարն, իհարկէ, ամեն նեխն չէր փոխւել:

— Տեսնում ես, — ասաց հայրը որդուն, — եթէ դու էլ այս քարի նման պինդ ես, ես քեզ չեմ արգելիլ վատ մարդկանց հետ ընկնել. իսկ եթէ թոյլ ես, ինչպէս այս խնձորը, այն ժամանակ ինքդ էլ կըփչանաս վատ ընկերների մէջ:

Ի՞նչ պատասխանեց մանուկը հօր:

Օրորոցի երգ

Արի, իմ սոխակ, թող պարտէզ, մէրին,
Տաղերով քուն բեր տղիս աչերին.
Բայց նա լալիս է, դու, սոխակ, մի գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:

Ե՛կ, արեղածագ, թող արտ ու արօտ,
Օրորէ՛ տղիս, քնի է կարօտ.
Բայց նա լալիս է, դու, ձագճուկ, մի գալ,
Իմ որդին չուզէ արեղալ դառնալ:

Թող դու, տատրակիկ, քո ձագն ու բունը,
Վուվուլով աղիս բեր անուշ քունը.
Բայց նա լալիս է, տատրակիկ մի՞ գալ.
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ:

Կաշաղակ ճարպիկ, գող, արծաթասէր,
Շահի գրուցով որդուս բունը բեր.
Բայց նա լալիս է, կաշաղակ, մի՞ գալ,
Իմ որդին չուզէ սովազար դառնալ:

Թող որսդ, արի, քաջասիրտ բազէ,
Քո երգը գուցէ իմ որդին կուզէ.
Բազէն որ եկաւ, որդիս լռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ:



Երջանիկ մարդը

Մի թագաւոր սաստիկ հիւանդացաւ և, ժողովելով իր իմաստուն մարդկանց, խոստացաւ, որ ով հնար կը գտնի իրան բժշկելու, իր թագաւորութեան կէսը նրան կը տալ: Իմաստուններն սկսեցին առանձին առանձին մտածել և լետոյ միասին խորհրդակցել, բայց ոչ մի միջոց չէին կարողանում գտնել: Վերջը նրանցից մէկը ասաց.— «Եթէ թագաւորին հագցնենք որ և է երջանիկ մարդու շապիկ, նա կառողջանայ»:

Այս բանի վրայ թագաւորը սաստիկ ուրախացաւ և մարդիկ ուղարկեց մի երջանիկ մարդ գտնելու: Թագաւորի խնդրակները երկար ժամանակ ման եկան նրա տէրու-

թեան մէջ, բայց երջանիկ մարդ չէին կարողանում գտնել: Ում որ երջանիկ էին համարում, նա մի որ և է պատճառով թշառ էր դուրս գալիս: Մէկը հարուստ էր, բայց առողջ չէր. միւսը քաջառողջ էր, սակայն աղքատ. երրորդը հարուստ էլ էր, բայց անխելք էր: Մի խօսքով ամեն մարդ մի բանից դժգոհ էր, ամեն մարդ մի պակասութիւն ունէր:

Մի անգամ, երեկոյեան, թագաւորի որդին անց է կենում մի խրճիթի մօտով և լսում է.— «Էհ, փառք Աստուծոյ, աշխատեցի, կերայ, կշտացայ, հիմա պառկեմ, հանգիստ քնեմ, էլ ինչս է պակաս»: Թագաւորի որդին ուրախացաւ, որ վերջապէս գտաւ մի կատարեալ երջանիկ մարդ. հրամայեց, որ հանեն նրա շապիկը և դրա փոխարէն տան նրան ինչ որ կամենայ: Բայց բանից դուրս եկաւ, որ այն երջանիկ մարդը շապիկ էլ չուներ:

Ինչո՞ւ եր աղիսես իրան երջանիկ համարում:
Փսկապե՞ս երջանիկ եր այդ մարդը:

ԳՐԱԽՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

5. Արտագրեցէք հետեւեալ բառերը և գ ա կ ի և յ ո գ ն ա կ ի թւով:
Հաւ—հաւեր. Օր—օրեր: Գործ—գործեր...: Դաշտ—դաշտ...
Քար—քար...: Գոյն—գոյն...: Քոյր—քոյր...: Սար—սար...: Բաղ—
բաղ...: Խոտ—խոտ...: Յանց—ցանց...: Խաչ—խաչ...: Գիւղ—
գիւղ...: Ամալ—ամալ...: Գունդ—գնդեր...: Թուղթ—...: Տուն—...:
Գիրք—...: Միրգ...: Մանուկ—մանուկներ: Թռչուն—թռչուն...:
Բերան—բերան...: Մեղու—մեղու...: Ժողով—ժողով...:

6. Արտագրեցէք «Վ ա տ ը ն կ ե Ր» յ ո գ ն ա ծ ի Յ բոլոր գ ո յ ա կ ա ն անուններն իրանց սկզբնական ձևով:

7. Արտագրեցէք հետեւեալ նախադասութիւնները և փակագծերի մէջ հարցեր աւելացրէք: Հարցերի տակը գիծ քաշեցէք:

Կովը (ով) բառաշում է: Արեւը (ինչը) ծագնց: Աշակերտը (...): Խաղում է: Անձրեւը (...): գալիս է: Սագը (...): լողում է: Արծիւը (...): Թռչուն է: Սոխակը (...): սքգում է: Օձը (...): սողում է: Ծառը (...): ծաղկւոյ:

Արդար վճիռ

Երկու փոքրիկ տղայ խաղում էին ընկուզենու տակ։ Նրանցից մեկի անունը Խաժակ էր, իսկ միւսինը Մացակ։ Քամին ծառից մի ընկուզ է վայր գցում։

Այդ բանը առաջինը նկատում է Խաժակը և վազում՝ դէպի ընկուզը, որ վերցնէ։ Բայց Մացակը աւելի մօտ լինելով, վրայ է ընկնում ու ինքը վեր թռցնում—շուտով վերցնում։

—Ինձ տուր,—ասում է Խաժակը,—այդ իմն է։

—Ինչի՞ եմ տալիս,—նկատում է Մացակը,—ինչո՞ւ է քոնը։

—Նրա համար, որ առաջին անգամ ես տեսայ ծառից վայր ընկնելը. ինձ տուր, ասում եմ։

—Ո՛չ, կըներես, չեմ տալ,—ասում է Մացակը.—այս ընկուզը իմն է, որովհետեւ առաջին անգամ ես վերցրի գետնից։

Նա—հա, սա—չէ, նա—հա, սա—չէ, վերջը նրանք, մի ընկուզի համար, մոռանալով իրանց սիրով ընկերութիւնը, դեռ իրար խեթում են, աչքերով իրար ուտում, իրար վրայ խոժոռւում, ապա միմեանց բրդում, քաշքշում։

Եւ շատ կարելի է, թէ բանը շատ վատ վերջանար, տուր ու գմբոց վեր կենար, եթէ նրանց ընկեր Սահակը վրայ չհասնէր։

—Սահա Սահակը,—ասում է Խաժակը,—թող սա ասէ, թէ մեզանից որի կողմն է արդարութիւնը։

—Շատ լաւ, թող ասէ,—համաձայնում է Մացակը։

Սահակը, երբ իմանում է բանի էութիւնը—երկու սիրով ընկերների կուսապատճառը, բժիշկապետի տալով առնում է Մացակի ձեռքից ընկուզը զգուշութեամբ կտրում աչնայէս, որ կճեպը երկու հաւասար կէս է լինում։

—Այս մի կէսը բեզ է պատկանում, Խաժակ, որովհետեւ առաջին անգամ դու ես նկատել ծառից վայր ընկնելը. այս կէսն էլ բեզ է պատկանում, Մացակ, որովհետեւ առա-

ջին անգամ դու ես վերցրել գետնից։ Իսկ միջուկը պատկանում է ինձ՝ որպէս վարձատրութիւն իմ այս աշխատանքիս։

Այդ ասելուն պէս՝ Սահակը բերանն է գցում միջուկը և ծամելով ու ծիծաղելով հեռանում։

Խաժակն ու Մացակը մնում են ամօթով։

Նրանք նոր են գլխի ընկնում, հասկանում իրանց սրխալը, բայց ի՞նչ կարող էին անել. արդէն բանը բանից անցել, պրծել էր։

Խնայիսի վճիռ ևւեց Սահակը։

Խաժակն ու Մացակը գոն մնացի՞ն այդ վճռից։

Շունն ու կատուն

Ա.



Ժամանակով կատուն

ճոն էր,

Շունն էլ գլխին գտակ

շունէր.

Միայն գիտեմ ո՞չ որ-

դիանց որդի

ձանկել էր մի գառան

մորթի։

Եկաւ մի օր, ձմեռնա-

մաին,

Կատուի կուշտը տարաւ

մորթին։

—Բարի աշողում, ուս-

տա Փիսօ.

Գլուխս մրսեց, ի սէր Աստծոյ,
Ան էս մորթին ու ինձ համար
Մի գտակ կարի գլխիս յարմար։

Վարձիդ համար միամիտ մնա,
 Համա-համա շատ շուշանայ:
 — Աչքիս վրայ, քեռի Քուշի,
 Մի գտակ է, հօ մի քուրք չի.
 Քո թանկագին խաթեր համար
 Ուրբաթ օրը համեցէք տար:
 Փողի մասին աւելորդ է,
 Մեր մէջ խօսելն էլ ամօթ է,
 Ի՞նչ մեծ բան է, տօ հէր օրհնած,
 Միան, միան մի գտակի վարձ:
 — Ուրբաթ օրը քեռի Քուշին՝
 Ուստից առաջ՝ բաց-բաց կուճին.
 Թափ թափ տալով՝ ծանդը ու մեծ
 Ուստա Կատուի շէմքում կանգնեց:
 — Ուստէն ռըր ա... փափախս ռըր ա...
 «Մի քիչ կացի—հրէս կերեայ»:

Բ.

— Ուստէն եկաւ քուրքը հագին,
 Շանը տեսաւ, բեխի տակին
 Իրան-իրան քիչ փընթփընթաց
 Ու մուշտարու վրայ թնդաց.
 — Յուրտը տարաւ... վահ, տնաշէն,
 Չէս թող անում մի շունչ քաշեն.
 Հեշտ բան հօ չի՞, դեռ ես նոր եմ
 Յրցամ տւել, թէ որ կարեմ:
 — Իէ հէր օրհնած, էտէնց առա,
 Էդ բարկանալդ էլ ընչիս ա:
 Փող եմ տւել, վախտին կարի,
 Թէ չէ՝ ասա էգուց արի:
 Համ ասում ես, համ չես կարում,
 Համ խօսում ես, վրէս գոռում.
 Համ, համ, համ, համ,
 Քանի՞, ախպէր, զնամ ու զամ...

Ասաւ Քուշին ու նեղացած
 Վերադարձաւ գլուխը բաց:

Գ.

Մին էլ եկաւ, դարձեալ չկար.
 Էս անգամը դիպան իրար.
 Էլ անպատիւ, անարգ խօսքեր,
 Էլ հին ու նոր, էլ հէրն ու մէր,
 Էլ գող Փիսօ, էլ քաշալ Շոն...
 Բանը հասաւ դիւանբաշուն:
 Շունը մինչև գնաց, եկաւ,
 Ուստա Կատուն կոտորն ընկաւ.
 Գլուխն առաւ ու մի գիշեր,
 Հայդէ, կորաւ. էն կորչիլն էր...

Դ.

Էն օրւանից մինչև օրս էլ
 Շունն էս բանը չի մոռացել.
 Մտքում հլա դեռ պահում է.
 Որտեղ կատւին պատահում է,
 Վեր է թռչում, վրայ վազում,
 Իրան մորթին յետ է ուզում.
 Իսկ սկերես Կատուն յանկարծ
 Յետ է դառնում ու բարկացած
 Փշտացնում է. մըթամ նոր եմ
 Յրցամ տւել, թէ որ կարեմ:



ԳՐԱԽՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

8. Արտագրեցէք «Արդար վճիռ» յօդածից թէ շնչաւոր և թէ անշունչ առարկաների անունները եզակի և յոգնակի թւով:

9. Գրեցէք ձեզանից մի բանի փոքրիկ նախադասութիւններ եզակի թւով: Իւրաքանչիւր նախադասութիւնից յետոյ վերջակէտ դրէք: Վերջակէտից յետոյ գլխատառ գրեցէք:

Օրինակ:— Ընկերս նկատ ծիտը ծըլւում է:

10. Արտագրեցէք միևնոյնը յոգնակի թւով.

Օրինակ:— Ընկերներս նկան:

11. Արտագրեցէք և հարցերին յարմար բառեր աւելացրէք:

Մանուկը (ով) սլատասխանեց, Աստղը (ինչը) փայլում է:

.... (ով) նկատ ... (ինչը) ընկաւ ... (ով) սովորեցնում է:

.... (ով) նրզում է: ... (ինչը) պայծառ է: ... (ով) վերադարձաւ:

.... (ով) կծում է: ... (ինչը) մաքուր է:

Բրդոտ խաղրնկերը

Պանդոկում նստած էր արջ պար ածողը և ընթրում էր, իսկ արջը կապած էր դուռը սիւնից, մի խեղճ արջ, որ սարսափելի տեսք ունէր, բայց ոչոքի փառս չէր տալիս:

Պանդոկի գլխին, սենեակում, խաղում էին երեք փոքրիկ երեխաներ: Մեծը վեց տարեկան կըլինէր, իսկ ամենից փոքրը հազիւ երկու տարեկան:

Թրախկ, թրոխկ, մէկն սկսեց բարձրանալ սանդուղքով. ուր պիտի լինէր:

Յանկարծ դուռը լայն բացւեց ու ահագին բրդոտ արջը մտաւ ներս: Խեղճը ձանձրացել էր ներքևում կանգնելուց, կապը բացւել էր, և ահա նա գտել էր սանդուղքի ձանապարհը:

Երեխաները սաստիկ վախեցան, ամեն մէկը մտաւ մի անկիւն: Արջը մօտեցաւ երեքին էլ, հոտոտեց իր լայն շնչովը, բայց ոչինչ չարաւ նրանց: «Երևի սա մի մեծ շուն է», սիրտ առան երեխաներն ու սկսեցին փաղաքշել:

Արջը փուլեց յատակին. փոքրիկը ընկաւ նրա վրայ, թաւալ էր տալիս ու խաղում:

Խաղում էր ու իր ոսկեհեր գլխիկը թաղում արջի խիտ ու սև բրդի մէջ:

Իսկ մեծ եղբայրը բերեց իր թմբուկը և սկսեց զարկել: Հէնց որ թմբուկը թնդաց, արջը տեղից վեր կացաւ, կանգնեց լեռնի թաթերի վրայ ու սկսեց պար գալ:

Մի ուրախութիւն էր նրա...

Իսկոյն երեխաներից ամեն մէկը վերցրեց մի մի հրացան, արջն էլ իր հրացանն ստացաւ, մի աւելի կոթ, որ շատ կարգին ու ամուր էր բռնում:

Հիանալի ընկեր էին գտել: Ու իրար լեռնից շարւած ունեւորը խփում էին գետնին ու գնում:

— Մէկ-երկու, մէկ-երկու:


Յանկարծ դուռը բացւեց ու մայրը սարսափահար կանգնեց դռան մէջ: Երեխաներից մէկը ուրախ-ուրախ գլխով արաւ ու գոռաց.

— Մայրիկ, տես, գինւոր ենք խաղում...

Հէնց այդ վայրկենին էր, որ վրայ հասաւ արջ պար ածողը:

Ինչո՞ւ երեխաների նոկիւղը փարսւեց:

Ինչո՞ւ սարսափեց մայրը, տեսնելով արջին երեխաների հետ:





Ժամկոչը եւ ուխտաւորը

Ա.

Օրւան մէկը կեռ պոչ շունը,
Իր քտիրոջից նեղացած՝
Մտքում դրեց տանից փախչել՝
Այդ ու հացը մոռացած:
Բայց արի տես՝ ընկեր գտաւ՝
Մեր շատախօս աքլորին.
Դրին, վերցրին, խօսք մէկ արին,
Ճամբայ ընկան միասին:

Բ.

Քրտինք մտած աքլոր ու շուն՝
Սար ու ձորեր կտրեցին,
Իրիկնադէմ յոգնած, դադրած՝
Մի վանքի մօտ կանգնեցին:
— Է՛հ, հերիք է, խնամի աքլոր,
Խօսեց շունը բեզարած.

Արի քնենք, որ վաղ դարթենք՝
Լուս ու մութը չբացւած:
Էս խօսքի հետ աքլորն ելաւ,
Թառեց վանքի կառուրին,
Շունն էլ մեկնեց չորս թաթերը
Վանքի դռան մեծ քարին:

Գ.

Ճամբորդները աչքը ծէգին՝
Գիշերն անցրին կիսաքուն.
Լուսադէմին աքլորն ելաւ,
Կանչեց իրա կուկուլիկուն:
Որտեղից որտեղ, էդ չար ժամին
Ձէնը լսեց մի աղւէս,
Հասաւ վանքին ու տեսաւ
Մեր աքլորին սկերես:
— Բարի լոյս քեզ, խնամի աքլոր,
Աղւէսն սկսեց բղաւել.
Խնդրեմ, ցած եկ ու դուռը բաց,
Վանքում կուգեմ աղօթել:
— Բարով եկար, բաւոր աղւէս,
Աչքիս վրայ տեղ ունիս.
Գալդ բարի, աքլորն ասեց,
Էս նրդից ես դու գալիս.
Բայց խնդրում եմ, դռան կշտին
Մեր ժամկոչին տես, ասա,
Որ շտապի ու քեզ համար
Վանքի դռները շուտ բանայ...

Դ.

Ուխտաւորը ուրախ-ուրախ
Դէպի դուռը շիտկուեց,
Բայց երբ յանկարծ շանը տեսաւ,
Ոտքերը տակը ծալեց:

Մեր Բօղարն էլ տեղից թռաւ,
Վրայ հասաւ աղւէսին,
Պոչից բռնեց, բուրդը հանեց,
Սև ուխտ բերեց իր գլխին:
Շունչը կտրած, կաղին տալով,
Աղւէսն հազիւ ազատւած,
Արագ-արագ վազվզելով՝
Ինքն իրան փրկեց իր թաղի-
— Զէ, քանի էս փանքն էսպէս ժամկոչ
Իր դռան մօտ կը պահի,
Աստուած վկայ՝ նա իր օրում,
Էլ ուխտաւոր չի տեսնի...

Իսկապէ՞ս ուխտ անելո՞ւ եր անել տրեւո՞ւ:
Ինչո՞ւ աղւեսին դուր չեկաւ վաճի՞ր ժամկոչը:



Ծիծեռնակը պահապան

Մեծ ուրախութիւն և ցնծութիւն է բազում ու պարտիզում:

Ճնճղուկները ծրլւելում են, կաշաղակները զըլզըլում, թուխսընկանը կը չկըչում է, կարծես ախ ու վախ է քաշում, որ գիծ ճուտերը իրան չեն լսում, ցաք ու ցրիւ են եղել, էլ չի կարողանում նրանց հաւաքել:

Մէկ էլ՝ լսեց ծիծեռնակի սուր ծըլւոցը: Իսկոյն ամեն բան փոխեց:

Ճնճղուկները դէս ու դէն փրոռացին. որը թփերի մէջ

թաք կացաւ, որը կտուրի տակ, որն էլ մտաւ կանեփների մէջ ու տափ արեց:

Ճուտիկները լեղապատառ վազեցին, կուչ եկան թուխսընկանի թևերի տակ, սուս կացան:

Մի ակնթարթում ամեն տեղ լռութիւն տիրեց: Միայն ծիծեռնակն էր, որ սուր-սուր ձայնով անդադար ծըլծըլում էր:


Չափարի յետևից անա վեր սլացաւ աւազակ բազէն՝ լայն թևերը ծանր թափահարելով: Նա դեղին աչքերը ման էր ածում բազի ու պարտէզի ամեն քունչ ու պուճախը: Թուխսկանը՝ փետուրներն ուռցրած՝ թևերը տարածել էր ճուտիկների վրայ, երկարացրել էր վիզը, կատաղութիւնից դողդողում, կուլի էր պատրաստում:

Բազէն պտտւում էր բազի գլխին և աւելի ու աւելի ներքև իջնում: Թուխսընկանը յուսահատ օգնութիւն էր կանչում: Իսկ ծիծեռնակներն աւելի են ծըլւում, աւելի են ախանջ ծակում իրանց ձայներով ու ամեն կողմից թռչում են աւազակի վրայ, կարծես ուզում են մաս-մաս անել նրան:


Շուտով դուրս վազեց տանից տատը թոռնիկի հետ և սկսեց քշել բազէին: Բազէն տեսաւ, որ այստեղ իր ձեռքը ոչինչ չի ընկնի, թռաւ, հեռացաւ դէպի խիտ անտառ:

Իսկ տատը խրատում էր չարածճի թոռնիկին.

— Տես, ձեռք չտաս, Օնիկ, ծիծեռնակի բնին, նա մեր ճուտերի պահապանն է:



Ծիծեռնակի պահանջը



Մեզնից շատ առաջ մի օձ երևեց
 Եւ ողջ աշխարհին ահ, սարսափ բերեց.
 Անուն կենդանի, շարժուն — շնչաւոր
 Պէտք է չթողնէր օձը ահաւոր:
 Բայց դեռ չսկսած ահուելի գործը,
 Խորամանկութեան դիմեց չար օձը:
 Կանչեց մոծակին, պատուիրեց նրան,
 Որ մի օրւայ մէջ գայ, ասէ իրան,
 Թէ ինչ շնչաւոր, թռչուն, կենդանի,
 Համեղ և անուշ միս, արիւն ունի:
 Թռաւ մոծակը, պարտքը կատարեց
 Եւ միայն մարդու արիւնը ընտրեց:
 Դարձաւ, որ պատմէ արքայ վիշապին,
 Բայց նա պատահեց իր եկած ճամբին
 Ծիծեռնակին, որ հարց ու փորձ արեց.
 Թէ ո՞ւր էր եկել և ի՞նչ կատարեց:
 Մոծակը մէկ-մէկ ամենը պատմեց
 Եւ վերջն էլ մարդին «թշուա» անւանեց:
 — Ինչո՞վ իմացար, սիրելի մոծակ,
 Որ բաղցրը մարդու արիւնն է միակ:
 — Ահա թէ ինչով, — լեզուն նա հանեց,
 Իսկ ծիծեռնակը կտրեց, փախցրեց:
 Գնաց մոծակը, կանգնեց օձի դէմ,
 Չկարաց խօսել, լուել էր արդէն.
 Արիւն էր գնում նրա բերանից,
 Լեզուն պոկւել էր իրա արմատից:
 Օձը հասկացաւ — թէ արիւն սիրէ,
 Ինքն էլ իր լեզուն պէտք է զոհ բերէ,
 Քաշեց քարափը, այնտեղ թաք կացաւ.
 Մոծակն էլ բաղցր արեան ծարաւի
 Մարդին կծելով անլեզու կապրի:

Իսկ ծիծեռնակը, երբ մարդ է տեսնում,
 Բաց դաշտի միջին առաջն է կտրում,
 Վրայ է վազում, շուրջը պտրտում,
 Օձից փրկելու իր վարձն է ուզում:

Ա. գ ո ա լ

Ազուաւը տեսաւ, որ սիրամարգները շատ գեղեցիկ են.
 փետուրներն այնպէս փայլուն, գոյնզգոյն, որ կարծես
 թագաւորի ծիրանի լինին:

— Ինչո՞ւ եմ ես այս սև ու յիմար ազուաների շարքն
 ընկել, — մտածեց նա, — արի, ես էլ այդպիսի սիրուն փե-
 տուրներով զարդարեմ:



սիրամարգներն ինձ սիրով
 կընդունեն իրանց մէջ,
 Իսկ անճոռնի ազուաներն,
 ինձ նայելով, զարմացած,
 հիացած կըմնան:

Եւ սիրամարդի սի-
 րուն փետուրներ ճարելով՝
 զուգւեց — զարդարեց ու
 գնաց, սիրամարգների հետ

խառնւեցաւ: Բայց այնտեղ նրան շուտով ճանաչեցին.
 սիրամարգները վրայ թափւեցան, կտցահարեցին, կեղծ
 փետուրների հետ իսկականներն էլ պոկեցին և իրանց
 միջից դուրս արին:

Անարգւած, փետուրներից զրկւած ազուաւը գնաց իր
 ազգականների մօտ, բայց նրանք էլ երես դարձրին և չըն-
 դունեցին նրան:

Ի՞նչ օրինակ կարող ենք վերցնել այս պատմութիւնից:

Արագիւններ

1.

Մի փոքրիկ գիւղի ծայրին, մի բարձր ծառի վրայ, արագիւնները դրել էին իրանց բունը: Մայրը նստել էր չորս ճուղիկների վրայ, իսկ մի քիչ հեռու տանիքի վրայ պահապան էր կանգնել հայր արագիւլը: Նա մի ոտը վեր բաշած՝ տնկել էր այնպէս անշարժ, կարծես փայտից լինէր շինած:



Ներքեւ, փողոցում, խաղում էին մի խումբ երեխաներ: Հէնց որ աչքներին ընկաւ արագիւլը, մինը սկսեց արագիւլի հին երգը ու ամբողջ խումբն էլ նրա հետ:

Հէյ, արագիւլ, տուն գնա,
Ցից մի ոտիդ մի մնա,
Կինդ նստած բնի մէջ՝
Օրօրում է քնի մէջ:
Էս մի ճուղիդ կախ կանեն,
Էն մէկէլին դադ կանեն,
Էս մի ճուղիդ կըմորթեն,
Էն մէկէլին կըքերթեն:

— Մայրիկ, լսում ես, էդ տղէքը ի՞նչ են երգում,— ճշացին փոքրիկ ճուղիկները:— Ասում են՝ մեզ պէտք է կախ անեն:

— Ականջ մի դնէք, ոչինչ էլ չի լինի:

Բայց երեխաները շարունակում էին երգել ու ջգրացնել արագիւլին:

Իսկ մայր արագիւլը սիրտ էր տալիս փոքրիկներին:

— Մի վախենաք. տեսէք, հայրիկը ի՞նչպէս հանգիստ կանգնել է, էն էլ մի ոտի վրայ:

— Ախ, մենք շատ ենք վախում,— ասին ճուղիկներն ու գլուխները քաշեցին յետ բնի խորքը:

2.

Միւս օրը, երբ տղէքը նորից հաւաքւել էին խաղալու, էլի սկսեցին իրանց երգը.

Էս մի ճուղիդ կախ կանեն,

Էն մէկէլին դադ կանեն...

— Ուրեմն իրաւ մեզ պէտք է կախ անեն,— հարցրին ճուղիկները:

— Չէ, ի՞նչ էք խօսում,— ասաւ մայրը:— Դուք պէտք է թռչել սովորէք. ես ձեզ կըսովորեցնեմ: Յետոյ միասին կըթռչենք դաշտ, գորտերին հիւր կըգնանք: Մեզ տեսնեն թէ չէ, խոր գլուխ կըտան ու կըսկսեն երգել. «Եկա՞ք, եկա՞ք. եկէ՛ք-եկէ՛ք-եկէ՛ք»: Մենք էլ կըսկսենք ուտել. էնպէս քէֆ կանենք ձր...

— Իսկ յետոյ, — հարցրին ճուղիկները:

— Յետոյ կըհաւաքւենք էս կողմերի բոլոր արագիւններս ու կըսկսենք մեր աշնան վարժութիւնները: Չէ՞ որ պէտք է լաւ թռչել իմանաք. էդ շատ հարկաւոր բան է: Ով լաւ թռչել չիմանայ, մեր խմբապետը նրան կըսատկացնի կըտուցով:

— Էհ, ի՞նչ անենք. մի բան որ մեզ պէտք է մորթեն: Այ, տես, տղէքը ի՞նչ են ասում:

— Դուք ի՞նչ ականջ արէք, — պատասխանեց արագիւլը:

— Աշնան մեծ վարժութիւններից յետոյ կըթռչենք սարերի, անտառների վրայով, հեռով, հեռով, դէպի տաք երկիրները: Էնտեղ մեծ գետեր կան, ահագին ճահիճներ կան, մէջը լիքը գորտ. մտիր ցեխը ու կեր, ինչքան կուզես:

— Ա՛հ,— բացազանչեցին ճուղիկները:

— Հապա, տեսնում էք: Եւ երբ էնտեղ էսպէս հրաշալի է լինում, էստեղ էնպէս ցուրտ է անում, որ ամպերը սառչում ու կտոր-կտոր, սպիտակ-սպիտակ թափւում են ցած:

Արագիւլը իբրեւ թէ ուզում էր ասել՝ «ձիւն է գալիս»:

— Էն չար տղէքն էլ պէտք է սառչեն ու կտոր-կտոր լինին, — հարցրին ճուղիկները:

—Չէ, բայց դրա նման մի բան: Պէտք է փախչեն, մանեն իրանց մութ սենեակները ու մկներ լսելու թաք կենան:

3.

Անցաւ մի քանի ժամանակ: Փոքրիկ արագիւններն արդէն այնքան էին մեծացել, որ կարողանում էին կանգնել բնի մէջ և դիտել իրանց շորս կողմը: Հայր արագիւրը ամեն օր նրանց համար բերում էր գորտեր, փոքրիկ օձեր ու այդ տեսակ համեղ պատառներ, ինչ որ ընկնում էր կտուցը: Եւ զանազան պատմութիւններ էր անում միշտ ճահճի մասին:

—Դէհ, ժամանակ է վերջապէս, պէտք է թռչել սովորէք, թէ չէ,—ասաւ մի օր մայր արագիւրը:

Ու շորս ճուտերն էլ գուրս պիտի ելնէին բնից: Առաջ էին գալիս, թևերը բաց անում, բայց վախում էին ցած թռչուեն:

—Տեսէք, ես ինչպէս եմ անում, — սովորեցնում էր մայրը:—Գլուխներդ էսպէս առաջ ձգեցէք, ոտներդ էլ էսպէս յետև: Մէկ-երկու, մէկ-երկու... էս է, որ կեանքի մէջ պէտք է ձեզ պահէ:

Յետոյ ինքը թռաւ մի կտոր տեղ: Փոքրիկներն էլ յետևից, թրըմփ, ընկան կողքի կտուրը:

—Ես չեմ ուզում թռչել,—ասաւ փոքրիկներից մինը ու նորից մտաւ բունը:—Իսկի էլ պէտք չեն տաք երկիրները:

—Ուզում ես ցրտից փէտանալ, երբ ձմեռը հասնի: Թէ ուզում ես տղէքը քեզ կախ անեն, խորովեն ու շամփրեն: Լաւ, ուզում ես կանչեմ,—բարկացաւ մայրը:

—Չէ, չէ, մի կանչի,—ճշաց փոքրիկը ու նորից թռաւ կտուրը միւսների մօտ:

4.

Երեք օրից յետոյ ճուտերը մի քիչ կարողանում էին թռչել և կարծում էին արդէն, թէ էն է՝ կարող են օդի մէջ բարձր սալառնել և թևերը փռել ու հանգստանալ:

Փորձում էին, բայց իսկոյն զլուխնոնծի ցած էին ընկնում ու ստիպւում էին նորից արագ թևերը շարժելու: Ցածը, փողոցով անց էին կենում երեխաներն ու երգում իրանց երգը.

Հէյ, արագիւր, տուն գնա,


Յից մի ոտիդ մի մնա:

—Մայրիկ, հիմա ցած չթռչե՞նք ու դրանց աչքերը չհանե՞նք,—հարցնում էին ճուտերը:

—Դուք ձեր բանին կացէք,—պատասխանում էր մայր արագիւրը:—Մեր արածը շատ աւելի կարևոր է: Մէկ, երկու, երեք: Թռչենք աջ, զանգակատան շուրջը, հիմա էլ ձախ, մէկ, երկու, երեք: Այ, էդ մինը քէֆս եկաւ: Էսպէս, որ գնայ, վաղը ձեզ կըտանեմ ճահճ: Էնտեղ ուրիշ շատ արագիւններ կան. էնպէս արէք, որ ամենքն էլ ձեզ հաւանեն. ասեն՝ էս ինչ լաւն են էս երեխէքը, էս ումն են:

—Իսկ էդ անախտան տղաներից մեր վրէժը հանելու չե՞նք,—նորից հարցրին փոքրիկ արագիւնները:

—Թող արէք գոռան, ինչքան կուզեն: Չէ՞ որ դուք պէտք է թռչէք դէպի ամպերը, գնաք տաք երկիրներ, իսկ նրանք էստեղ պէտք է մըսեն: Ոչ կանաչ տերև են ունենալու, ոչ էլ գորտ:



ԳՐԱԽՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

12. Արտագրեցէք հետեւեալ գոյական անունները ե գ ա կ ի թւով:
Տներ: Աշքեր: Բաղաքներ: Մարդիկ: Դէզեր: Երեկոներ: Մա-
զեր: Օղակներ: Մայրեր: Տեղեր: Աթոռներ: Եզներ: Առիւծներ:
Քզէզներ: Եղծմաներ: Պոզեր: Լորեր: Կանայք: Չամաններ:

Օրինակ:—Տներ—տուն, Աշքեր—աչք:

13. Արտագրեցէք հետեւեալ նախադասութիւնները և ենթակաների-
տակ գիծ քաշեցէք:

Քոթոթը խաղում է: Եղբայրս տաքանում է: Կատուն չանկ-
ոնց: Պապը ծնրացել էր: Որդին քարկացաւ: Չուր լողում է: Աղա-
խինը հառաչում է: Հիւանդն առողջացաւ: Ամանը կտրուց:

14. Արտագրեցէք նոյնը յոգնակի թւով:

Օրինակ:—Քոթոթները խաղում են...

„Պօղոս-Պետրոս“

Վաղճւց, երբ մօտ էր երկրին երկինքը
Ու լսում էր մարդկանց դեռ Տէրն-Ինքը,
էն լաւ ժամանակ երկու մանուկներ
Ունէին մի չար, մի անսիրտ խորթ մէր:
—Կորէք, գնացէք, աշխատանք արէք,
Աշխատանք արէք ու եկէք, կերէք:
Ի՞նչ էր վեր թափւել անգործ ու անբան,
Հասած տղերք էր հինգ վեց տարեկան...

Այսպէս բարկացաւ մի օր խորթ մէրը,
Ճիպտաներ տւաւ, ղրկեց հորթերը:
Անհանգիստ հորթեր, ամառւան շոգ օր:
Կէտ արին, փախան, ընկան սար ու ձոր:
Նրանց յետեից՝ լալով, հեալով,
Փոքրիկ որբերը՝ քարէքար գալով՝
Վազ էին տալիս անտառի միջում,
Վազ էին տալիս ու իրար կանչում:

—Պօղոս, գտա՛ր:

—Չէ՛ք:

—Պետրոս, գտա՛ր:

—Չէ՛ք:

—Վայ-վայ, վո՛ւ-վո՛ւ,

Վայ-վայ, վո՛ւ-վո՛ւ:

Շատ որ ման եկան, խեղճերն յոգնեցին,
եկան՝ խորթ մօրը լալով պատմեցին:

—Նանի, այ նանի, կորան հորթերը...

—Վայ, գետինն անցնէք, ճշաց խորթ մէրը,

Թող դուք կորչէիք հորթերի տեղակ
Անտակ ձորի մէջ, անժաժ քարի տակ:

Մի արջ պատահէր, մի գաղան, մի գէլ,

Որ չէի տեսել ձեր շուքը մէկ էլ...

Դէհ, յետ գնացէք, կորէք,

Մինչև չգտնէք հորթերը, բերէք՝

Աչքիս չերևաք, այ աչքիս փշեր,

Թէ չէ կըսականեմ ես ձեզ էս գիշեր...

Ու ճիպտան էլ յետ իրանց թաթերին,
Յոգնած ու սոված, արցունքն այտերին,
Փոքրիկ որբերը՝ անտառի միջում
Գիշերւայ կիսին լալիս են, կանչում:

—Պօղոս, գտա՛ր:

—Չէ՛ք:

—Պետրոս, գտա՛ր:

—Չէ՛ք:

—Վայ-վայ, վո՛ւ-վո՛ւ,

Վայ-վայ, վո՛ւ-վո՛ւ:

Անտէր հորթերը չկան ու չկան:
Ճարները կտրած՝ խեղճերը եկան,
Լալով չոքեցին:

—Տէր Աստուած, ասին:

Ի՞նչ կըլինի գթաս՝
Գոնէ թեւեր տաս,
Թեւեր տաս՝ թռչենք,
Թռչենք ու կորչենք,
Որ էլ չտեսնի մեզ մեր խորթ մէրը,
Մինչև որ գտնենք կորած հորթերը...

Հէնց ասին-չասին անմեղ բերանով,
Աստուած որոտաց իր գթոտ ձայնով.
— Ահա ձեզ թեւեր, սիրուն երեխէք,
Թռչուններ դառէք, թռած ման եկէք.
Որ էլ չտեսնի ձեզ ձեր խորթ մէրը,
Մինչև որ գտնէք կորած հորթերը:
Գիշերը քնեցէք ծառերի ճիւղին,
Ծեղն ու ծղօտը արէք անկողին.
Ապրուստ էլ կերէք իմ լի սեղանից,
Երբ որ դատարկուն եղաք ձեր տանից....

Այսպէս վերեւից հէնց կանչեց Աստուած,
Փոքրիկ որբերը փոխւեցին յանկարծ
Ու թեւեր առան,
Թռչուններ դառան:
Ու թեւեր առած,
Թռչուններ դառած,
Դեռ մինչև էս օր,
Ընկած սար ու ձոր,
Ծըլուծ են, մնչուծ,
Մէկ մէկու կանչում:

— Պօղոս, գտա՛ր:

— Չէ՛ք:

— Պետրոս, գտա՛ր:

— Չէ՛ք:

— Վայ-վայ, վո՛ւ-վո՛ւ,

Վայ-վայ, վո՛ւ-վո՛ւ:

Որսորդի ու կաքաւը

Մի անգամ կաքաւն՝ անտառից դէպի դաշտ թռչելիս՝
պատահեց որսորդին:

— Սիրելի որսորդ, — ասաց նա. — Աստուած սիրես, ձագեր-
բիս չսպանես, նրանք այս անտառի բոլոր թռչուններից
ամենասիրուններն են:

— Շատ բարի, — պատասխանեց որսորդը, — եթէ այդ
սիրուն ձագերդ պատահեն ինձ, ես նրանց կըխնայեմ,
ձեռք չեմ տալ:

Կաքաւը հանգիստ սրտով թռաւ-գնաց իր գործին:
Բայց երեկոյեան, տուն վերադառնալիս, ի՞նչ տեսնի խեղճ
մայրը: Որսորդը՝ մաղախի մէջ դրած՝ տանում էր փոքրիկ
կաքաւերին, նրա սիրասուն ձագերին:


— Ա՛խ, անխիղճ որսորդ, — մորմորած սրտով ասաց
մայրը. — չէ՞ որ դու խոստացար խնայել ձագուկներին.
Ինչո՞ւ խօսքդ չպահեցիր. ինչո՞ւ սպանեցիր խեղճ ձագուկ-
ներին. ամօթ քեզ, ստախօս մարդ:

— Բայց չէ՞ որ դու ինձ ասացիր, թէ քո ձագերն այս
անտառի ամենասիրուն թռչուններն են, այնինչ իմ րս-
պանածները, ինչպէս դու էլ տեսնում ես, ահա այս մոխ-
րագոյն թռչնակներն են, — պատասխանեց որսորդը:

— Ա՛խ, — բացազանչեց որդեկորոյս մայրը, — մի՞թէ
դու չգիտես, որ ամեն մի մօր համար ամենասիրունն ու
ամենազուրեկանը իր հարազատ զաւակն է:

Ի՞նչու որսորդն իր խոստումը չկատարեց:





Կաքաւի երգը

Արե բացւեց թուխ ամպերէն,
Կաքաւ թռաւ կանաչ սարէն,
Կանաչ սարէն՝ սարի ծէրէն,
Բարե բերաւ ծաղիկներէն.

Սիրունիկ, սիրունիկ,
Նաշխուն կաքաւիկ:

Քո բուն հիւսած ծաղիկներով—
Շուշան, նարգիզ, նունուֆարով,
Քո տեղ լցւած ցօղ ու շողով,
Քնես-կելնես երգ ու տաղով.

Սիրունիկ, սիրունիկ,
Նաշխուն կաքաւիկ:

Անգաւաւ եղնիկը

Անտառին մօտիկ, այրի մէջ, մի սիրուն եղնիկ իրան
համար բուն էր շինել և իր ձագուկների հետ ապրում
էր: Բայց երկար չտևեց նրա երջանկութիւնը: Նրա փոք-
րիկ, սիրունիկ ձագերը հիւանդացան և մեռան. մայրը,

Աղետն ու գայլը

Սորամանկ աղւեսը, քաղցած-ծարաւ, փորը վեց-վեց
անելով, ման էր գալիս: Նա տեսաւ, որ մի տեղ թակարդ
է զրած և նրա վրայ էլ մի մեծ կտոր պանիր անցկացրած:
Սորամանկն ուզում էր պանիրը ձեռք գցել, բայց թակար-
դից էր վախում:

Աղւեսի բանն յաջողւեց: Հեռից մի գայլ էր գալիս:
Աղւեսն ինքն իրան ասաց.

—Այս շատ լաւ եղաւ. թակարդի գորութիւնը այս
յիմար գայլի վրայ կը փորձեմ:

Գայլը, մօտենալով աղւեսին և պանիրը տեսնելով,
զարմացած հարցրեց.

—Աղւես եղբայր, ի՞նչպէս է, որ պանիրը չես կերել:

—Այսօր մեզ պատ է—օրը ուրբաթ է, չեմ ուզում մեր
պապական օրէնքը խախտել. եթէ ուզում ես, գայլ եղ-
բայր, դու անուշ արա:

Գայլը՝ պանիրն մօտենալուն պէս՝ ընկաւ թակարդը,
իսկ պանիրը մի կողմ թռաւ: Աղւեսն իսկոյն խլեց պանի-
րը և սկսեց հանգիստ անուշ անել:

—Տօ, անիրաւ աղւես,—ասաց գայլը,—հապա ասում
էիր, թէ պատ է, օրը ուրբաթ է:

—Է՛, բան չունիս, գայլ եղբայր, ուրբաթը քո գլխին
եկաւ, ինձ համար այժմ շաբաթ է,—ասաց աղւեսն ու
հեռացաւ:

ձշմարի՛սն ասաց աղետը:

Ենչո՞ւ նա խաբէց գայլին:

Աղետն ու գայլը

1.

Ուստա աղւեսն օլինբազ,
Պոչը մազոտ, երկու գազ,
Իրան բաշած ձէն ու ձուկ՝

Ճամպին տուեց սուտ մեռուկ:
Դհօլ-զուռնա ածելով,
Կարմիր գինի կոնծելով,

Տասը քսան ձիաւոր,
Ալ ու ալւան հարսնետր
Մի նորահարս՝ նոր խաթուն
Տանում էին կեսրանց տուն:
Տեսան ճամպին աղւեսին,
Ընծայ տւին նոր հարսին,
Դրին հարսի գաւակը,
Բայց էն չարի գաւակը
Թռաւ, ելաւ շալակը
Խտուտ տւեց էն հարսին:
Հարսն էլ առաւ աղւեսին.

— Աման աղւես,
Աներես,
Ինձ մի անի
Սկերես.

Նորահարս եմ չխօսկան,
Ինձ խնայէ էս անգամ:
«Լաւ, հարսիկ ջան, բաշխեցի.
Դէ՛հ ոսկիքդ տուր ինձի»:
Նորահարսը ամօթից
Ոսկիքն հանեց իր ճտից:
Ուրախ-Փըրլախ աղւեսը,
Չկայ մինն էլ էդպէսը,
Պոչ ու ոսկի թափ արեց,
Չի ու թամբից հօփ արեց,
Թռաւ գետին ու վրդղաց,
Միայն հարսն էր, որ տըղղաց:

Յիսուն-վաթսուն, քչիցը,
Ոսկին կապած պոչիցը,
Մին ձախ, մին աջ,
Յետ ու առաջ շարաճճին
Վեր էր թռչում,
Պոչն էր պաշում,

Խաղ էր կանչում.

— Աման, աման,
Այ աման.

Ո՞վ կայ, ո՞վ կայ
Ինձ նման:

Ելայ հարսի գաւակը,
Գաւակիցն էլ շալակը,
Ոսկիքն առայ
Ու փախայ,
Դէ՛հ, աղւես ջան,
Դէ՛հ, խաղա:—

Աղւեսն էդպէս առաջ յետ
Հն խաղում էր պոչի հետ.
Մի գէլ եկաւ դունչը խէտ,
Կուճին անմաղ, վիզը փէտ,
Ասաւ՝ «Ասա, այ աղւես,
Էսքան ոսկի ո՞րդից քեզ»:

— Գէլիկ,
Փէլիկ,

Դէլ բիձա,
Ածել գիտե՞ս,
Մի ածա.

Ծափ տուր,
Չափ տուր
Քո հանգի,
Կանգնեմ թաթի,
Կրնկի,
Ես մի պարեմ
Տրնկի,

Ուղունդարա,
Ռանկի,
Կինտաուրի,
Քոչարի,
Այ շալախօ,
Շալախօ.

Ոսկին շարքով
Իրա կարգով
էս իմ պոչին,
Դաշտի միջին,
Թող զընգզընգայ:
Չունեցողը
Թող սընգսընգայ,
«էդ ո՞րտեղից, էդ ո՞րտեղ
կայ...»

— Գէլիկ,
Փէլիկ,
Գէլ բիձա,
Լիճը տւեց
Ինձ ընծայ.
Էնտեղ, էնտեղ կայ մի լիճ,
Ափերի մօտ ջուրը բիշ:
Ես գնացի, էն ջրում
Պոչս դրի. մի օրում
Էսքան ոսկի դեղ-դեղին
Շարւան պոչիս մէջտեղին
Չկների հետ,
Չկան կոյտ:
Ախր ինչո՞ւ
Չեկար շուտ:
Գնանք կուղես, գէլ բիձա,
Ամբողջ լիճը տամ ընծայ:
— «Որ էդպէս է,
Այ աղւես,
Հեծի վրէս,
Տանեմ քեզ»:

2.

Աղւեսն հեծաւ գէլ բիձին
Ու քշելով անսանձ ձին,
Եկան հասան էն լճին:

Գէլը ջրում պըպըղեց
Պոչն արմատից ներս բղեց:
Աղւեսը թէ՛ «Գէլ, բեզ մօտ
Մին էլ կըգամ առաւօտ.
Տեղէդ չեղնես դու իսկի,
Պոչդ թող լաւ տըղկի,
Որ դուրս հանի շատ ոսկի»:
Մի ցուրտ օր էր յունւարի.
Գիշերն եղաւ մի տարի.

Երկինք
Գետինք
Ճըքճըքաց,
Գէլը ցրտից
Վընգվընգաց,

Գոչեց. «Ոսկի, ձուկ պէտք
չի»:

Պոչը քաշեց, որ փախչի,
Բայց ո՞րտեղից, էն լճից.
Լիճը կպել էր պոչից:

Օրը բացւեց, լուսացաւ,
Ուստէն քնից վեր կացաւ
Ու ոսկիքը պլպլան
Շարեց պոչին խլւան
Ու չորս ոտը, իրա ձին—
Հեծաւ, հասաւ գէլ բիձին,
Որ կպել էր սառուցին:
«Դէ՛հ, կոնծկոնծա,
Կոնծկոնծա,
Խելքի պուտուկ,
Գէլ բիձա,
Հերիք պարես
Քոչարի:
Չնգան ոսկով,
Անուշ խօսքով

Տեսար, ես քեզ
 Ինչ արի:
 Էս աշխարհը
 Մի դմակ,
 Ես էլ միջին
 Մի դանակ:
 Այ, շալակդ ես հեծայ,
 Դու տեղովդ ինձ ընծայ,
 Քաղցած աղւէս՝
 Գէլի միս.
 Էլի ապրեց
 Կէս ամիս»:

Էդտեղ աղւէսն
 Անիրաւ
 Գէլի վիզը ձեռք առաւ,
 Գէլին կերաւ օրէցօր,
 Ես ինչ գիտեմ՝ քանի օր.
 Ու էնպէս կուշա,
 Հաշտ ու հուշտ
 Կնաց նորից
 Խաբելու,
 Անմեղ արիւն
 Թափելու:
 Բայց թէ վերջն է գովելի.
 Էլ ի՞նչ ասեմ աւելի:

Գայլը եւ շունը

Նիհար, քաղցած գայլը՝ գիւղի մօտով անցնելիս՝ պատահեց մի գեր շան և հարցրեց նրան.

—Այ շուն, ասա, խնդրեմ, դուք ձեր կերակուրը ճրտեղից էք ճարում:

—Մարդիկ են տալիս, — պատասխանեց շունը:

Երեի դուք դժւար ծառայութիւն էք անում նրանց:

—Ո՛չ, — պատասխանեց շունը. — մեր գործը դժւար չէ:

Մենք միայն գիշերները նրանց տունն ենք պահպանում:

— Ուրեմն միայն դրա համար են ձեզ կերակրում, — ասաց գայլը: — Զի՞ լինիլ, որ ես էլ գամ մարդկանց մօտ ծառայելու. թէ չէ մենք մեծ դժւարութեամբ ենք կերակուր ձեռք բերում:

— Ինչո՞ւ չէ, գնանք, — ասաց շունը. — իմ տէրը քեզ էլ կըկերակրէ:

Գայլն ուրախ-ուրախ վազեց շան յետևից: Բայց դռան մօտ նա նկատեց, որ շան պարանոցի մազերը պոկւած են:

—Այդ ինչի՞ց է, — հարցրեց նա:

—Է՛հ, այնպէս, — պատասխանեց շունը:

— Ի՞նչպէս թէ այնպէս:

—Այնպէս, էլի, շղթայից է: Դու չգիտե՞ս, որ ցերեկ-ներն ինձ շղթայով կապում են:

—Կապում են, — ասաց գայլն ու կանգ առաւ: — Դէհ, ուրեմն մնաս բարով: Աւելի լաւ է՝ ես միշտ նիհար, բայց ազատ լինիմ, քան թէ փորիս համար ուրիշներին գերի դառնամ:

Միթե՞ արեւի ըստ է քաղցած մնալը, քանի որ ուրիշներին գերի լինելը:

Անցորդներն ու շները

Մի անգամ
 Երկու բարեկամ
 Անցնում էին խօսելով:
 Նրանց ձայնը լսելով՝
 Մի շուն բակից,
 Դռան տակից

Վազեց վրայ:

Մին էլ ահա

Դէսից

Դէնից,

Քանի դռնից

Կեռ պոչերը,

Ինչի՞ց գազազեցին շները:

Թաց գնչերը
 Բարձրացրին հարայ հրոց
 Եւ փողոցը դարձաւ շնոց:

Մի անցորդն արի

Կռացաւ քարի:

Միւսը թևից քաշեց յետ.

«Ախպէր, ասաւ, եկ ինձ հետ.

Քարով՝ էլ շատ կըգազազին,

Միշտ էգպէս են շունն ու

Թաղին»:

Եւ իսկապէս, քիչ որ անցան,


Էլ հաչոցի ձայն չիմացան:

Ամեն քան իր ժամանակին

Փոքրիկ քուռակը դաշտում վազվզում էր մօր չորս կողմը, գլուխը թափ տալիս, պոչը շարժում, ուրախ-ուրախ խրխնջում, իսկ նրա մայրը հանդարտ արածում էր

և ուշի-ուշով նայում, թէ չլինի մէկը դիպչի նրան, մի չարիք հասցնի:

— Ինչո՞ւ դու էլ ինձ հետ չես վազում, չես խաղում, — նեղացաւ քուռակը մօր վրայ:



— Զաւակս, — ասաց պառաւ ձին իր ձագուկին, — դու խաղանք և գլարճացիր, քանի դեռ փոքր ես. բայց դու էլ երբ մեծանաս և սկսես աշխատել — ամբողջ օրը ծանրութիւններ կրել, չարչարել, այն ժամանակ այդ յիմարութիւնները մտքովդ էլ չեն անցնիլ: Իսկ երբ քեզ նման մի չարածճի էլ կունենաս, այն ժամանակ արդէն դու էլ ինձ նման կըհետես, թէ չլինի՞ նրան մի փորձանք պատահի:

Գառը գայլի մորթով

Մի օր մէկ գառը, չգիտեմ՝ ինչ էր, խելքին ինչ տեսակ քամի էր փչել, Գցեց իր վրայ մի գայլի մորթի, Գնաց, խառնեցաւ հետը իր հօտի:

Բայց երբ շների աչքովն ընկաւ, Ասին՝ անտառից անս գայլ եկաւ. Գոռում-գոչումով վրայ վազեցին, Բերաններն առան ու գրգրեցին:

Լաւ էր, որ շուտով հովիւը տեսաւ, Փայտ ու մահակով նոյն տեղը հասաւ, Ու խեղճ գառնուկը կատղած շների Սուր ատամներից հազիւ փրկեցաւ:

Եւ մեր գառը հազիւ-հազ, Արիւնաթաթախ ու նւազ, Թոյլ ոտները քաշ տալով՝ Հասաւ գոմը մի կերպով:



ԳՐԱԽՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

22. Արտագրեցէք հետեւալ նախադասութիւնները և ստորոգրեալների տակ գիծ քաշեցէք:

Կովը որոճում է: Ձին վազում է: Խոտը չորացաւ: Ոգնին կենդանի է: Թիթեռը միջատ է: Պատկերը գեղեցիկ է: Երկինքը ամպամպած է: Հիւրերը կըգան: Գետը ցամաքեց: Մարդը զարմացաւ: Դիւղացին հնձում է:

23. Արտագրեցէք նոյնը յոգնակի թւով: Ստորոգրեալների տակ դարձեալ գիծ քաշեցէք:

Օրինակ. — Կովերը որոճում են:

24. Արտագրեցէք առանձին-առանձին յատուկ, հասարակ և հաւաքական գոյական անունները:

Յարութիւն. Երկամ: Կամար: Զօկ: Մարգարիտ: Եղան: Անտառ: Ոսկի: Մարմին: Հրաշնայ: Հեղինէ: Մատիտ: Հրանոյշ: Գունդ: Զօրք: Հայկունի: Արամ: Թուղթ: Եկեղեցի: Մոսկա: Կուր: Մասիս, Սար: Դետ: Աստղ:

Ագան աղետը

Մի անգամ, ձմեռը, երեկոյեան դէմ, քաղցած աղւէսն անյաջող որսորդութիւնից տուն էր վերադառնում: Նրա փորը վեց-վեց էր անում, ուտել էր ուզում. ամբողջ օրը մի մուկը, մի քնաթռիւթախ ագռաւ անգամ չկարողացաւ բռնել: Մի հին պարսպի մօտով անցնելիս՝ յանկարծ տեսաւ, որ պարսպի յետեր երկու չաղլիկ նապաստակ նըստած են ձիւնի վրայ:

— Այլաւ բաղդ, — մտածեց աղւէսն ինքն իրան և թաք կացաւ պարսպի յետեր: — Այժմ էլ քաղցած փորով տուն չեմ գնալ:

Եւ նա սկսեց ընտրել:

— Սրանցից ճիշտ ուտեմ: Չախ կողմինը մեծ է, աջինը — հաստլիկ: Չախինը մսալի է երևում, աջինը կարծես նրանից աւելի չաղլիկ է, նրան բռնելն էլ հեշտ է: Այդ այդպէս է, բայց եթէ այժմ այս հաստին բռնեմ, այն մեծին ուրիշ անգամ չեմ կարող ձեռք ձգել: Չէ, այս մեծից սկսեմ, իսկ հաստին միշտ էլ կարող եմ բռնել:

Այս ասելով՝ աղւէսն արդէն վճռել էր մեծ նապաստակի վրայ յարձակւել, բայց յանկարծ աչքն ընկաւ հաստլիկին ու կրկին սկսեց մտածել:

— Ահ, այս հաստլիկը պէտք է որ համ մսալի լինի, համ քնքոյշ. չէ, սրան բռնեմ:

Հէնց այդ ժամանակ նապաստակները տեսան աղւէսին:

— Աղւէսը, աղւէսը, — ձայն տւին իրար ու քամու պէս այս ու այն կողմ փախան:

— Ախ, անիրաւներ, — վշտացած գոչեց աղւէսը, — ես պէտք է այն մեծին ընտրած լինէի: — Եւ նա փախչող նապաստակների յետերից շրթունքները լիզեց ու քաղցած տուն դարձաւ:

Ի՞նչը գրկեց աղետսին որսից:

Մեղուն եւ արջը

Անտառի խորքում մեղուն իր համար
Ծառի փշակում, գետնից ոչ բարձր,
Մի բուն էր շինել,
Մէջը ձագ հանել
Եւ անուշ մեղրով
Բճիճը լցրել:

Չգիտեմ՝ ինչպէս, մի օր արշուկը
Առաւ այդ մեղրի անուշիկ հոտը:

Մըթմըթաց, փնթփնթաց,
Ծառն ի վեր կանգնեց
Եւ երկու թաթեր
Բնի մէջ կոխեց:

Մեղուն տըզտըզաց, տըզզացին ձագեր,
Բայց արջը չքաշեց իր բրդոտ թաթեր:

Քանդեց ողջ բունը,
Չարդեց խեղճ ձագեր,
Հանեց բճիճը,
Լափեց անհամբեր:

Մեղուն՝ երբ տեսաւ իրա ձագուկներ
Այս անգութ արջի ոտքի տակ ճգմաւ՝

Դռուղրուաց տխուր,
Խայթեց նրա աչք
Եւ ինքն էլ անշունչ
Ընկաւ ծառի տակ:

Ի՞նչը սխալեց մեղսին անձնագոյն լիանը:



Պարտիզպանն եւ իր էշը

Պարտիզպան Գէվօն պիտի քաղաք գնար կանաչեղէն ծախելու:

Ինչ ասես, որ նա չբեռնեց իր էշի վրայ—էլ կաղամբ, էլ գաղար, բոխկ, սոխ, պրաս, կոտիմ. խեղճ անասունի միայն ականջներն ու սմբակներն էին երևում բեռան տակից և մի քիչ էլ պոչի ծայրը:

Բեռնեց ու քշեց դէպի քաղաք: Ճանապարհին անցնում էր առւի մօտից, ուռիների տակով:

«Այ լաւ միտք. արի, էս ուռիներից կանաչ ճիւղեր կտրատեմ, բազար տանեմ, ծախեմ. սքանչելի կապեր կը լինին: Սրանց ծանրութիւնն ինչ է որ... էշս իմ գոված էշը չի լինի, եթէ էս չնչին ծանրութիւնն էլ չտանի»:

Այդպէս էլ արեց ու ճանապարհը շարունակեց:

Մէկ էլ տեսաւ մի թխկի:

—Ինչ ուղիղ ճիւղեր ունի, է,—բացականչեց պարտիզպանը,—էսօր բաղդս բանում է. ինչ լաւ սարի դուրս կըգան էս ճիւղերից: Մի քանի հատ սարի կտրեմ, քաղաքում ծախեց, հօ լաւ. թէ չէ՝ պարտէզս կըտանեմ, լօբուս համար պէտք կըգան: Էնքան թեթեւ են, որ էշս ինչ պիտի ասի:

Մէկ տասնեակ սարի էլ կրկին բարձեց էշին ու առաջ գնաց: Արեւ արդէն սկսել էր այրել. ծառերի ստերից դուրս էին եկել ու ընկել բաց դաշտավայր տեղ:

—Պա՛, էսքան էլ շոգ, քրտնքի մէջ լողանում եմ,—ասաց Գէվօն, ու էլ առանց երկար մտածելու հանեց իր վրայի հաստ չուխան ու էն էլ ձգեց էշի բեռան վրայ:

—Այ ապրես, էշ ջան, այ ապրես, հոգուդ մատաղ,—ասում էր նա, տեսնելով, ինչպէս էշը քայլերը մանր-մանր դնելով՝ առաջ էր վազում և աշխատում էր բարակ ոտները շատ չծալել և ամուր դնել:

Մէկ էլ անասունի ոտը ճանապարհի քարին դէմ ընկաւ, խեղճը սայթաքեց և ողջ մարմնով գետնին տարածեց:

Ու էլ չբարձրացաւ:

Պէտք էր տեսնել, թէ ինչպէս էր Գէվօն իր գլխին վայ տալիս ու ծեծում, տեսնելով իր ամենահին և ամենահաւատարիմ ծառային այդ դրութեան մէջ՝ սատկելիս:

—Հախս է,—հախս է,—կրկնում էր նա անդադար,—էս տարիքի մարդ եմ դառել, խելքս ճւղ էր: Ո՞վ էր ստիպում ինձ, որ բարձեմ, հա՛ բարձեմ:

Ա. ու ա. ծ.—Քիչ բարձի, շուտ դարձի:



Նապաստակի տունը



Նապաստակն ու աղետը

Անտառի մէջ, բարձր տեղում,
Որտեղ քամին պար էր

խաղում,

Նապաստակը տուն էր շինել

Ու աղետին դրկից եղել:

Տուն էր շինել, այն էլ

փայտից,

Պաշտպանում էր տաքից-
ցրտից:

Աղետինը թէև լայն էր,

Թէև երկու աչքանի էր,

Բայց շատ ցուրտ էր՝ ողջը

ձիւնից—

Այդ էր եկել տիրոջ ձեռքից:

Բուք օրերին, ցուրտ ձմրանը,

Երբ վառում էր վառարանը,

Տան օճորքից ջուր էր մաղում՝

Եւ աղետը միջին լողում:

Մի օր եկաւ հալճըլոցը,

Տունը առաւ կաթկըթոցը.

Դեռ չհասած մարտի կէսը

Անտուն մնաց մեր աղետը:

—Ոտքդ պաչեմ, այ Շահգադէ,

Յրտի ձեռքից ինձ ազատէ
Մի անկիւն տուր տանդ

Ծառայ արա քո առաջին:
Խօսք եմ տալիս, ես ամեն օր
Լաւմ, կարեմք ու հին ունոր,
Եփեմ, թափեմ, քեզ ծա-
ռայեմ,



Տունդ, տեղդ կարգին պահեմ:
«Լաւ, ներս արի, դրկից
աղւէս,

Բայց խնդրում եմ, ինձ հետ
վարւես:

Կոխ, ուշուց ես չեմ
սիրում,

Հին բաներն էլ չեմ քրքրում:
Ու աղւէսը մտաւ տունը,

Ճաշը կերաւ, առաւ քունը:
Քնից զարթնեց, դէս դէն

Տան տիրոջը խիստ հայհոյեց:
— Այ վայր տամ էդ քո գլխին,

Դու տան տէրը, ես աղախի՛ն:
Տան մեծ մասը քեզի պէսին,

Դուան տակը խան աղւէսին:
Դէհ, դուրս կորչի,

Ծուռ աչք, շղթիկ:
Պոչ էլ չունի,

Սրան մտիկ:

Նապաստակն ու արջը

Նապաստակն իրանն առաւ,
Տունը թողեց ու դուրս թռաւ,
Յետ հնայեց, վագեց, լացեց,
Քեռուն գտաւ, ցաւը
պատմեց:

— Այ իմ քեռի, ա՛յ արջ ապէր,
էն աղւէսը՝ չար սրտամեռ,
Փայտէ տունս ձեռքէս առաւ,
Դուռը փակեց իրանն արաւ:
— Քրոջ որդի, է, ամօթ չէ՛,
Որ դու կուլաց, քեռիդ
սող չէ՛:

Արի գնանք, ես էն փչին
Մի լաւ դաս տամ տանը
միջին:

Քրոջ որդին, քեռի արջը,
Մինն յետևը, մինն առաջը,

Եկան կանգնան տան դռանը,
Վառած գտան վառարանը:

Սրտոտ քեռին դուռը ծեծեց
Ու աղւէսին հերսոտ կանչեց:

— Տօ, փուշ աղւէս, ասա,
ինչո՞ւ

էս իմ եթիմ քրոջ մանչու
Փայտէ տանը տէր ես դառել

Ու իրան էլ դուրս ես արել:
— Լաւ եմ արել,

Տէր եմ դառել:
Ձեռքէ գալիք

Մարդ խաբելիք:
Դէհ, մի փքւէք,

Դունից չքւէք:
Ու աղւէսը դռան ծակից

Վառարանի թէժ կրակից
Բերեց ցանեց արջի վրան,
Մի լաւ խանձեց դունչն ու
բերան:

Փախաւ արջը դունչը այրած,
Քրոջ որդին հետը առած:

Նապաստակն ու գայլը

Անտուն, անտէր նապաստակը
Գնաց նստեց ծառի տակը,
Մաղիկ-մաղիկ մղկտալով,
Ցաւն էր պատմում բարձր
լալով:

— Ինձ լաւ խաբեց կեղծա-
ւորը

Դուրսը թողեց էսպէս օրը:
Անտուն, անտէր ես ի՞նչ

անեմ, Բո տան տեղը մի իմանանք:
Մի տեղ չկայ, միջին քնեմ:

Լացը լսեց գայլը զանգաղ,
Եկաւ, ասաց՝ «Այ քեզ մատաղ,

Ինչի՞ կուլաս մաղիկ-մաղիկ,
Կտրատելով սիրտ ու աղիք»:

— Է՛, գայլ եղբայր, բանս
բուրդ է:

Վրէս բարակ, օրը ցուրտ է:
էն աղւէսին թող չմնայ,
Տանս միջին գրողի գայ:

Նապաստակը
Ծառի տակը
Լացեց, լացեց,
Սիրտը բացեց:

— Դու քեզ խղճա՛, իմ նա-
պաստակ...

Բայց մի կորցնի դու ժա-
մանակ:

Գնանք, ցույց տուր էն
աղւէսին:

— Է, քիչ առաջ ինչ արին...
«Է, քիչ խօսի, վեր կաց՝


գնանք,
Բո տան տեղը մի իմանանք:

էն աղւէսին ես մի քաշ տամ,
Մեզ երկուսիս մի լաւ

ճաշ տամ»:
Գայլ, նապաստակ ընկան

ճամպայ,
Եկան, եկան մին էլ ահա

Հասան՝
Տեսան




Մի վառ կրակ՝
Վրան կաթսան:
Ծեր աղէսը գոգնոցն հագին,
Վրէն մաքուր արգին-կար-
գին՝
Դունդունալով ճաշ էր եփում,
Շերփով խառնում, բեափը
թափում:
Կերակուրը իւղոտ-սոխոտ,
Հոտ էր բուրում, մի անուշ
հոտ,
Որ ծեր գայլին կալեց, կապեց,
Ախորժակը խիստ զրգռեց:
— Ինչ էլ լինի, ես աղէսին
Բան չեմ ասի տանը մասին:
Կերթամ մօտը, կ'ընկնիմ
ոտը:
Դէհ, աղէսն էլ խօմ խամը չէ,
Որ քաղցածին չճանաչէ:
Ասաց գայլը, չորեց դռան,
Բայց չբացած լեզու, բերան՝
Աղէսը այն
Հն յարձակեց
Գայլի վրան:
Ճչաց, գոչեց
Զիւ, բարձրաձայն:
— Կորիր, քաւթան,
Սե ցաւը քեզ:
Նապաստակի պաշտպանին
տես:
Էդ երբ առար վկայական,
Դարձար գլխիս գէշ փաս-
տաբան:
— Մի բարկանայ, պարոն
աղէս:

Քո ցեղակից գայլին եմ ես-
նապաստակի հետ ի՞նչ
ունեմ,
Եկայ քեզ մօտ, որ ճաշ անեմ:
— Խնդրեմ՝ ներես ինձ, գայլ
ախպէր,
Զղային եմ ու անհամբեր:
Քիչ սպասի, ճաշը հասնի:
Բայց որպէսզի կրակը
չանցնի,
Խնդրեմ մի գաս՝ տակը փշես,
Գիտեմ, որ դու հպարտ էլ չես:
Գայլը իսկոյն կրակը փշեց,
Ու աղէսը կաթսան շրջեց:
Յիմար գայլի գլուխը խաշեց:
Գայլը սաստիկ ոռնաց,
գոռաց,
Պոչի վրայ շատ ֆրոֆրոաց,
Գլխի ցաւից ելաւ, թռաւ,
Մի չորս ոտ էլ դեռ փոխ
առաւ,
Հագիւ իրան զցեց բուռը,
Հիւանդ պառկեց սաղ
գարունը:
Նապաստակը եւ ւսխաղաղը
Անտուն անտէր նապաստակը
Դարձեալ եկաւ ծառի տակը:
Մաղիկ-մաղիկ մղկըտալով,
Ցաւն էր պատմում՝
Բարձր լալով:
«Ինձ լաւ խաբեց կեղծաւորը,
Դուրսը թողեց էսպէս օրը:
Անտուն, անտէր ես ի՞նչ
անեմ

Մի տեղ չկայ, միջին քնեմ»:
Զայնը լսեց աքաղաղը,
Իսկոյն թողեց իրա խաղը,
Վազեց՝ եկաւ ծառի տակը,
Որտեղ կուլար նապաստակը:
Էնպէս գոռամ, ձէնս փոխած,
Որ չքոտը տունը թողած՝
Էն մթնովը ելնի, փախչի,
Էս աքլորը արջ ու գայլ չի»:
Մուլթը մուլթին,
Ժամը ուլթին,
Արագ, արագ
Առանց ճրագ
Հերոսները
Տունը հասան
Ու անասան



— Ինչի՞ կուլաս, ալ իմ
չլքիկ,
Մի վեր նայի, մի ինձ մտիկ:
Հերիք ճմլես էդ աչերդ,
Որ կուրանաս, ո՞վ է տէրդ:
Մի լար, մի լար, չարդ
տանեմ,
Պատճառն ասա, մի ճար
անեմ:
Նապաստակը աքաղաղին
Պատմեց եղածն իրա տեղին:
«Որ էդպէս է,
Մի սպասէ,
Էլ մի տրդգա,
Հետս վրդգա,
Տան տէր դառի,
Ինձ մի վառի:
Մոեղի պէս նրան կտցեմ:
Աղէսն ի՞նչ է՝ հետը մրցեմ, Ու էդպէս էլ միշտ ապրեցին»:
Մուլթը գոչեց ձայնը փոխած,
Ալ արիւնը աչքը կոխած:
— Ես ոչ արջն եմ, ոչ էլ գայլը:
Աշխարհք կառնէ շորիս փայլը:
Ես իշխանն եմ Մեծ Վար-
գերես,
Մուլթ եմ կախել հինգ գազ
ու կէս:
Էլ չի պըծնի գող աղէսը,
Թէ որ գտնեմ նրան ներսը:
— Ա՛յ, էս ո՞վ է Վարդերեսը...
Դուռը բացեց խան աղէսը
Ու էն մթնով
Դիպաւ գետնով,
Լեղապատառ
Ընկաւ անտառ:
Աքաղաղն ու նապաստակը,
Որ բաշում էր տան փա-
փազը,
Տուն ներս մտան, սեղան
նստան,
Հաշտ ու բարիշ լաւ ընթ-
րեցին



Քաջ նապաստակի պատմությունը

1.

Նապաստակը ծնեց անտառում և շարունակ վախենում էր:

Մի չոր ճիւղ էր կոտրւում, թէ մի ծիտ էր թռչում— նրա լեզին պատուում էր:

Վախեց մի օր, երկու օր, մի շաբաթ, մի տարի, և յետոյ մեծացաւ ու մէկ էլ վախելուց զահլէն գնաց:

— Ես ոչ ոքից չեմ վախենում,— գոռաց անտառում:

— Այ, իսկի որ ասես, չեմ վախում. պրծաւ գնաց:

Վազեցին, եկան, հաւաքւեցին մեծ ու փոքր նապաստակները, ահանջ են դնում, թէ ինչպէս է պարծենում նապաստակը: Ահանջ են դնում— ու չեն հաւատում իրանց ահանջներին: Դեռ չէր պատահել, որ նապաստակը ոչ ոքից չվախենար:

— Էյ դու, շղիկ, գայլից էլ չե՞ս վախենում:

— Ոչ գայլից եմ վախենում, ոչ աղւէսից, ոչ էլ արջից. ոչ ոքից չեմ վախենում:

— Էդ արդէն չափից անց կացաւ: — Ծիծաղեցին նապաստակները, հրոհուցին ու սկսեցին գլուխկոնձի տալ, վազվզել, ցատկոտել գփի նման:

— Էլ ի՞նչ եմ ձեզ հետ երկար ու բարակ խօսում,— պոռում էր քաջասիրտ նապաստակը: — Եթէ ինձ մի գայլ պատահի, ես ինքս նրան կուտեմ:

— Ախ, ի՞նչ մասխարա է, ախ, ի՞նչ յիմար է: Բոլորը տեսնում են, որ համ մասխարա է, համ էլ յիմար, և բոլորն էլ ծիծաղում են:

2.

Մի գլուխ գոռում են նապաստակները գայլի մասին, իսկ գայլը, դու մի ասիլ, հէնց հեռու չի լինում:

Ման էր եկել սոված գայլը անտառում, ման էր եկել իր գործերով ու մտքումը ասել. «այ, մի նապաստակ պատահի— ի՞նչ կուտեմ...» Հէնց էդ ժամանակ քթի տակ շլսթ նապաստակների ձայնն ու հոտը չառնի: Մօտենում է, թաք է կենում և լսում, թէ ինչպէս են ծիծաղում իրան վրայ, և ամենից շատ էն պարծենկոտ շղիկը:

— Գաց, հէնց այս է քեզ պիտի ուտեմ,— մտածում էր գայլը ու ջոկում, թէ որն է էդպէս պարծենում:

Իսկ նապաստակները ոչինչ չեն տեսնում և աւելի ու աւելի ուրախանում են:

Բանը էնտեղ հասաւ, որ պարծենկոտ շղիկը ելաւ մի կոճկի, բարձրացաւ յետեի թաթերի վրայ ու խօսեց.

— Լսեցէք, դուք վախկոտներ: Լսեցէք և ինձ նայեցէք: Ահա ես ձեզ մի բան ցոյց կըտամ... ես... ես... ես...

Էստեղ խեղճ նապաստակի լեզուն փորն ընկաւ:

Տեսաւ իրան մտիկ անող գայլին: Միւսները չէին տեսնում, իսկ նա տեսնում էր ու վախից ձէնը կտրեց: Մին էլ յանկարծ մեր պարծենկոտ շղիկը գնդակի պէս վեր թռաւ, դիպաւ ուղղակի գայլի գլխովը, գլորեց նրա մէջքով, գլուխկոնձի տաւ մէկէլ օդի մէջ և ծլկեց, ի՞նչպէս է փախչում:

3.

Երկար վազեց խեղճ նապաստակը, էնքան վազեց, որ ոյժից ընկաւ:

Նրան թւում էր, թէ գայլը կրնակակոխ գալիս է յետեից և այս է՝ կրքոնի իր ատամներով ու կրզզզզի:

Վերջապէս խեղճը ուժասպառ աչքերը փակեց և կիսամեռ ընկաւ մի թփի տակ:

Իսկ գայլն էդ ժամանակ վազում էր հակառակ կողմը:

Երբ նապաստակը ընկաւ նրա գլխին, նա կարծեց, թէ մինը իրան հրացանով զարկեց, գլուխն առաւ ու փախաւ։

Երկար ժամանակ նապաստակները ուշքի չէին գալիս։ Ո՛րը թփի տակ էր թաք կացել, որը կոճղի յետևը, որը փոսի մէջ։

Վերջապէս յոգնեցին թաքնւելուց ու կամաց-կամաց՝ ովքեր որ աւելի քաջ էին, գլուխները հանեցին, սկսեցին չորս կողմը նայել։

—Ամա թէ լաւ վախեցրեց գայլին մեր նապաստակը, հա՛, — վճռեցին բոլորը։ — Եթէ նա չլինէր, մենք կենդանի չէինք պրծնիլ... Բայց ո՛ւր է նա, մեր անվախ նապաստակը։

Սկսեցին փնտրել. ման եկան, ման եկան, անվախը չկայ։

—Կերած չլինի՞ նրան մի ուրիշ գայլ։

Վերջապէս գտան մի փոսի մէջ, թփի տակ պարկած, վախից կիսամեռ։

—Կեցցէ շղիկը, — գոռացին միաձայն։ — Վա՛յ, շղիկ, ամա վախեցրիր պառաւ գայլին, հա՛, շնորհակալ ենք, ախպէր։ Իսկ մենք կարծում էինք, թէ դու պարծենում ես։

Խորամանկ շղիկը յանկարծ սիրտ առաւ, դուրս եկաւ իր փոսից, աչքերը չփշփացրեց, երեսը թափ տւաւ։

—Հապա դուք ի՞նչ էիք կարծում, այ դուք վախկոտներ։

Ու էն օրւանից մեր նապաստակն սկսեց ինքն էլ հաւատալ, թէ ինքը ճիշտ որ՝ ոչ ոքից չի վախենում։

Նապաստակները հառատո՞ւմ էին իրանց պարծենկոտ ընկերոջը։

Ի՞նչ եղաւ, որ առանք իրանց կարծիքը փոխեցին։

ԳՐԱԴՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

25. Արտագրեցէք հետևեալ նիւթական առարկաների անունները։

Աղ։ Բամբակ։ Շաքար։ Գնդակ։ Սրինգ։ Մեխակ։ Մարդ։ Փետուր։ Ժիրան։ Արօր։ Երկիր։ Կացին։ Սանձ։ Փայտ։

70. Արտագրեցէք հետևեալ մտաւոր առարկաների անունները։


Հոգի։ Հրեշտակ։ Եռանդ։ Բաջովթին։ Ապրուստ։ Իմաստու-

թին։ Ծուլութիւն։ Կամք։ Երջանկութիւն։ Սէր։ Ատելութիւն։

27. Արտագրեցէք և հարցերի համաձայն ստորոգեալներ աւելացրէք։
Ծիծեռնակը (ի՞նչ է անում) ծըլլում է։ Գորտն (ի՞նչ է անում) Մշակը (ի՞նչ կանէ) Ագռաւը (ի՞նչ է) Կօշկակարը (ի՞նչ արաւ) Հունձը (ի՞նչ եղաւ) Ծովը (ի՞նչ պէս է) Մեղրը (ի՞նչպէս է)

Մեղուն և արծիւը

—Շատ ողորմելի ես դու, — ասաց մի օր հպարտ արծիւը համեստ մեղւին. — չնայելով՝ որ ամբողջ կեանքումդ տանջւում ես, բայց և այնպէս քեզ ոչ ոք չի ճանաչում, որովհետև դուք մի փոքրիկ մեղրախորիսի վրայ հազար հոգով էք աշխատում։ Ո՞վ կարող է որոշել, թէ ո՞ր մասն է քո շինածը։



—Ինչի՞ս է հարկաւոր այդ, — համեստութեամբ պատասխանեց մեղուն. —

ի՞նչ օգուտ, եթէ ճանաչեն ինձ։ Բաւական է, որ ճանաչում ու սիրում են մեր մեղրը և ես ինձ բաղդաւոր եմ զգում, որ մեղրախորիսի մէջ մի կաթիլ էլ իմ մեղրից կայ։

—Հապա, մէկ նայիր ինձ, — ասաց արծիւը. — հէնց որ ես երևում եմ երկնակամարի երեսին, իսկոյն բոլորը նկատում ու ճանաչում են ինձ. զազաններն ու թռչունները աչք չեն հեռացնում ինձանից. հովիւների բունն անգամ աչքերից փախչում է։ Ահա այդպէս բոլորը՝ թէ մեծ և թէ փոքր, լաւ ճանաչում են ինձ։

—Այո, ճանաչում են, որովհետև վախենում են քեզանից, — ասաց մեղուն։

Ինչո՞ւ ես մարդիկ սիրում մեղիս և ինչո՞ւ վախենում արծիւից։

Մրջիւններ

Մի օր Արմենակը իրանց պատշգամբի սիւնի վրայ անթիւ, անհամար մրջիւններ տեսաւ։ Նրանցից շատերը սիւնի գլխից արագ-արագ իրար յետևից ներքև էին շտապում, շատերն էլ ներքևից վերև էին բաձրանում։ Նա երկար, ուշի ուշով դիտեց և նկատեց, որ երկու կողմից եկողները իրար հանդիպելիս մի փոքր կանգ էին առնում, գլուխ գլխի տալիս և յետոյ միասին իսկոյն ներքև էին վերադառնում։

— Էս ի՞նչ բան է, — մտածեց Արմենակը, — թէ վերև են գնում, էլ ինչո՞ւ են վերադառնում։

Շատ մտածեց, բայց ոչինչ չհասկացաւ։ Հարցրեց հայրիկից։

— Նրանք իրանց կամքով չեն վերադառնում, — ասաց հայրիկը, — այլ վերևից եկող ընկերներն են նրանց վերադարձնում։

— Ի՞նչպէս, — հարցրեց Արմենակը։

— Դու տեսնում ես որ հանդիպելիս գլուխ գլխի են տալիս։

— Այո, տեսնում եմ և շատ զարմանում։ Ինչո՞ւ են այդպէս անում, հայրիկ։

— Նրանք խօսում են։

— Խօսում են։

— Այո, իմ սիրելիս, ներքևից գնացողը հարցնում է վերևից իջնողին՝ վերևում հօ վտանգ չկա՞յ։ Վերևից եկողն էլ պատասխանում է՝ այո, կայ։ Այս է պատճառը, որ վերև գնացողները ճանապարհը չեն շարունակում ու վերադառնում են։

Դժլար հաւատաց Արմենակը և ուզեց անպատճառ իմանալ, թէ ինչ վտանգ կայ վերևում։ Բարձրացաւ կրտուրը, մօտեցաւ այն սիւնի գլխին, որտեղից մրջիւնները ներքև էին իջնում, և ինչ տեսնի։ Սիւնի վերևում սարգը ցանց էր հիւսել, ինքն էլ մի կողմում կուշ եկել,